

Միքայել Աբաջյանց

Ծանր երազ (Նովել-պամֆլետ)

Ուրեմն՝ երազ տեսա՝ իբր ապրում են հենց Հանրապետության Հրապարակում: Լուսամուտներս բացվում են ձվածն հրապարակի վրա, որտեղով ծուլորեն ընթանում են «Ժիգուլիներն» ու երթուղային տաքսիները, իսկ ամեն ինչից զատ, մի կողմում անմիջապես երկնագույն ջրավազանից բխում է ճերմակափրփուր շատրվանը: Յուրաքանչյուր քառորդ ժամը մեկ Հարավային աշտարակի վրա տեղադրված ժամացույցն ազդարարում է ժամանակի մասին, սակայն երազն ինձ այդ ձայներից չի ընդհատվում, շարունակ ձգվում է ու ձգվում: Երազումս նաև տեսա՝ իբր մեր սանդղավանդակում երեք բնակարան կա: Իմը՝ կենտրոնում, մեկը՝ աջ կողմում, ու ևս մեկը՝ ձախ կողմում:

Աջ կողմի բնակարանում ապրում էր իմ սիրելի կինը: Նրան սիրում էի երկար տարիներ, արտաքինը չէի նկատում ու երջանիկ էի նրա հետ: Նրա բնակարանի լուսամուտից երևում էր միևնույն հրապարակը, որտեղով սլանում էին «31 Վոլգաները», և ավելի ուժգին, քան իմ բնակարանում, լսվում էին ժամացույցի զարկերը:

Սակայն ամուսնացա ոչ թե նրա հետ, ում սիրում էի, այլ մյուսի՝ ձախ կողմի բնակարանում ապրող կնոջ հետ: Որովհետև նա՝ ձախ կողմի բնակարանում ապրողը, ավելի գեղեցիկ էր: Ոտքերը կաթնավուն ճերմակ էին, երկար, իսկ շուրթերը՝ վառ կարմիր, որովհետև նա կարմիր շրթներկ էր օգտագործում: Նա ինձ անմիջապես ասաց, որ իր մեջ ծերուկ է ապրում: Բայց ես չհավատացի, մտածեցի, որ դա զառանցանք է, ու որը կանցնի, երբ նա ամուսնանա: Նրա բնակարանում բացովի մի մեծ բազմոց կար, որի վրա քնում էինք: Տղամարդու իմ գործն ավարտելուց հետո խալաթն էի վրաս գցում և երկար նայում լուսամուտից: Այնտեղ առաջվա նման սլանում էին «Ժիգուլիները», երթուղային տաքսիներն ու «31 Վոլգաները»:

Երբ նայում էի լուսամուտից, կինս սկսում էր ատել ինձ:

Հետո սանդղավանդակով վերադառնում էի այն կնոջ մոտ, ում սիրում էի, լսում էի ժամացույցի զարկերը և նրա կրծքին էի սեղմվում: Ես գրեթե չէի լսում, թե ինչ էր ինձ ասում, որովհետև վախենում էի, թե կիմանա, որ արդեն ամուսնացել եմ: Նրա քնելուց հետո կամացուկ մոտենում էի լուսամուտին. դրսում արդեն լռել էր շատրվանը, և վառվում էին հյուրանոցների լույսերը:

Ապա անաղմուկ հագնվում էի ու կամացուկ քայլերով՝ սանդղավանդակով կնոջս մոտ էի գնում: Նա տանն էր լինում: Կրկին ասում էր, որ իր մեջ ծերունի է ապրում: Ու ինձ կրկին ապշեցնում էր նրա գեղեցկությունը, և մտածում էի, թե նա ինձ հետ է, որովհետև նրա մեջ ծերունի է ապրում: Ու նաև մտածում էի, թե նա այդպես է ասում ինչ-որ արատ թաքցնելու համար: Ես կրկին դեպի անկողինն էի տանում նրան ու չէի հավատում, որ չկա որևէ մեկը, որին սիրում է

նա: Նորից անուն էի իմ տղամարդկային գործը, իսկ հետո մենակ էի նրան թողնում ու դեպի լուսամուտն էի գնում: Այնտեղ նորից ցայտում էր շատրվանը, և դանդաղ երթուղային տաքսիներն էին ընթանում, խայտաբղետ «ժիգուլիները», «Մերսեդեսները» և BMW-ները, և չգիտես ինչու, այդ բոլոր մեքենաները սուլում էին սարսափելի:

Ապա թողնում էի կնոջս ու սանդղավանդակով այն կնոջ մոտ էի գնում, ում սիրում էի: Վերջինս նայում էր ինձ թախծոտ հայացքով, ինչ-որ բան էր ասում, բայց երբ խոսում էր, ժամացույցը զարկում էր, ու ես ոչինչ չէի լսում: Սեղմվում էի նրա կրծքին, սփոփում, նա չէր դիմադրում, և դա ինձ ցավ էր պատճառում: Հետո լուսամուտին էի մոտենում. ինչ-որ ռոք խումբ համերգ էր տալիս, բազմություն էր հավաքվել, ու վառվում էին լույսերը: Այդ լույսերի ներքո «Մերսեդեսները» դանդաղ շրջանցում էին ամբոխին:

Սանդղավանդակով գնացի կնոջս մոտ: Բնակարանը մաքուր էր, բայց ամեն ինչ ցաքուցրիվ էր, և պատերն ասես սովարաթղթից լինեին: Նրա պարանոցի վրա արագ զարկերակն էր խփում, ու ես չէի հարցնում՝ ինչու, որովհետև վախենում էի, որ ինձնից կհեռանա: Այս անգամ նա սովորականից ավելի համառորեն էր պնդում, որ իր մեջ ծերունի է ապրում: Նրա հետ չվիճեցի, տարա դեպի բազմոցը, իսկ հետո մոտեցա լուսամուտին, ուր կատաղությամբ ոռնում էր շատրվանը՝ ջրցողելով ամբոխին սպիտակ փրփուրով, ամբոխը նույնպես մռնչում էր ու ձեռքերը շարունակ վեր էր նետում և ինչ-որ բան պահանջում: Երբ նայում էի լուսամուտից, կինս ատում էր ինձ: Ու ես մտածում էի, որ լուսամուտից այն կողմ տիրող անկարգության պատճառն այն է, որ նա չի սիրում ինձ: Ու նաև մտածում էի, որ ատում է ինձ, որովհետև իր մեջ ծերունի է ապրում: Իսկ դրսում ինչ-որ բան երգելու փորձեր էին շարունակում անել երաժիշտները, ամբոխի մեջ խցանվել էին «31 Վոլգաները» և սուլում էին նյարդային:

Հետո կրկին սանդղավանդակով գնացի այն կնոջ մոտ, ում սիրում էի, և երջանիկ էի: Բայց զարկեց ժամացույցը, և նա իմացավ, որ ես արդեն ամուսնացել եմ ու հանկարծ միանգամից կորցրեց հետաքրքրությունն իմ հանդեպ, հագնվեց ու գնաց: Ես մոտեցա պատուհանին. հրապարակով անցավ իմ սիրելի կինը, և շուրջը դատարկվեց: Բայց ինձ շարունակ մթության մեջ թաքնված ամբոխն էր երևում: Եվ միայն սև ջուրն էր, որ խաղաղ կայծկլտում էր ջրավազանում:

Երբ սանդղավանդակով կնոջս մոտ էի գնում, սիրտս արդեն մոկտում էր: Մտա սենյակ: Կինս չկար: Ինձ թվաց, թե սենյակում ընդհանրապես ոչ ոք չկա, բայց հետո չհարդարած անկողնում վեր ցատկեց զգզված մազերով ինչ-որ մեկը: Վախենալ էի ուզում, բայց դա ծերուկ էր սոսկ: Թե ինչ գործ ուներ նա այստեղ, ուղեղս հասկանալ հրաժարվում էր: Նա վախեցած նայում էր ինձ, թափանցող կապույտ աչքերով ու լռում էր: Նրան ուզում էի դուրս անել, բայց հետո մտածեցի, որ նա կապ ունի կնոջս հետ, և որոշեցի թողնել մինչև գա կինս:

Հետո լուսամուտին մոտեցա, ուր դեռ տարօրինակ շառաչն ու աղմուկն էին լսվում: Իսկ տեսարանը գայթակղում էր: Ամբոխին ցրելով ու վառ կանաչ

գրահները շողշողացնելով՝ Ամիրյան փողոցի կողմից շարքերով
գրահամեքենաներն էին Ջրապարակ մտնում: Մի գրահամեքենա հետո
ծանրորեն պտտվեց, սև ծխի քուլաներ բաց թողեց ու թրթուրները գրնգացնելով
մոտեցավ իմ լուսամուտներին, պատահաբար ճզմեց ներքևում կանգնած
BMW-ն, ծանր փողն ասելությանը դանդաղորեն ուղղեց իմ կողմն ու
անսպասելի կրակեց...

Ջետո արթնացա կարծես:

2003թ.

Ռուսերենից թարգմանեց ՇԱՔԵ ԵՐԻՑՅԱՆԸ